

ԱՒԵՏԻՔ ԵԶԵԿԵԱՆ

1916 թ. նոյեմբերի 26-ին թուրքերի բոլորքումից վախճանուեց թիֆլիսում Աւետիք Եզեկեանը, որ երկար տարիներ եղել է Հայոց Ազգադրական Ընկերութեան Խորագրական Մասնաժողովի անդամ:

Հանգուցեալը 67 տարեկան էր: Մնուել էր Ալեքսանդրապոլում, ուսումնառացել էր Վենետիկի Մխիթարեանների մօտ և լաւ գիտէր եւրոպական մի քանի լեզուներ: Ուսումը վերջացնելուց յետոյ վերադառնալով հայրենիք, Եզեկեանը երկար ժամանակ ուսուցչութիւն արաւ զանազան դպրոցներում, մի ժամանակ նաեւ քարտուղար էր էջմիածնի Սինոդում: Մօտ 10 տարի վարել է նաեւ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհրդի քարտուղարի պաշտօնը և շատ աշխիւ ընկնող զեր է կատարել այդ հիմնարկութեան առաջին կազմակերպչական ջրջումը:

Հանգուցեալ Եզեկեանը նաեւ լաւ զարգացած և ինքնատիպ գրականագէտ էր: Իբրև Մխիթարեան դպրոցի աշակերտ, գեղեցիկ կերպով ծանօթ էր հայոց հին գրականութեան և ունէր իր յատուկ գրելու ոճը, հարուստ ու ծաղկեցրած, սեթեւեթ ու արհեստական, բայց ճշ հայկարանութեամբ: Կրթութիւնը նրան պատրաստել էր բանասիրական աշխատութիւնների համար և ամենայն հաւանականութեամբ նա այս ճիւղում կարող պիտի լինէր ցոյց տալ օրինաւոր գործունէութիւն: Բայց անձնական հակումը մղում էր նրան դէպի գեղարուեստական գրականութիւնը, ուր, սակայն, չը կարողացաւ փոքր ի շատէ աչքի ընկնող դիրք գրաւել և նրա թողածը մի քանի փոքրիկ, բայց խնամքով կատարուած և ճաշակաւոր թարգմանութիւններ են:

Յամենայն դէպս, հայագիտութիւնը և հայ գրականութիւնն ի դէմս Եզեկեանի զրկուեցին մի լաւ պատրաստուած և ընդունակ ուժից:

Եզեկեանը անտարբեր չէր և հասարակական գործունէութեան վերաբերմամբ: Նա եռանդով մասնակցում էր մեր կուլտուրական շարժումներին, պայքարող ոյժ էր, որոշ ու հաստատուն աշխարհայեացքի մարդ: Յաճախ էր երևում հայ հրապարակախօսութեան ասպարէզում և երկար տարիներից ի վեր աշխատակցում էր «Մշակ» լրագրին:

Վերջին տարիներս նա անդամ էր և Հայոց Դրամատիքական Ընկերութեան, Նպաստամատոյց ընկերութեան վարչութիւնների, ինչպէս նաեւ Հայաստանի Վերաշինութեան կոմիտէի: